

րող ձայնով կանչեց բազմութեան միջից, “իսկ ի՞նչ եղան միլիոնից աւելի հայերը, որ մի ժամանակ ապրում էին ամբողջ Անատոլիայում, Կարսը ներառեալ” ... բայց լրտես-քարտուղարը խղճաց մարդուկին եւ անունը չարձա-նագրեց»:

Էլիֆ Շաֆաքը Նոյնպէս հարցադրումի է ենթարկում թուրք իշխանութեան Թուրքիայի հասարակութիւնը միատեսակ եւ միատարր ցոյց տալու անհիմն ջանքը: Նրա վեպի տարազան ձայները խօսում են ճշմարտութեան մասին, ցոյց են տալիս իրարայաջորդ իշխանութիւնների անյաջող փորձը՝ պատմութեան հաւաքական յիշողութիւնը ջնջելու: *The Bastard of Istanbul* վեպում Շաֆաքը չի խուսափում Նոյնիսկ «ցեղասպանութիւն» բառը գործածե-լուց: Ցեղասպանութիւնը վերապրած Տիգրան Ստամբուլ-եանը իր քրոջ թոռան ազգային ինքնութեան մասին մտահոգ է: Հայ հօրից ու ամերիկացի մօրից սերած այս աղջիկը պիտի մեծանայ մօր երկրորդ ամուսնու՝ թուրք Մուստաֆայի դաստիարակութեամբ՝ թէկուզ Ամերիկայում: Նա երբ մեծանայ ի՞նչ պիտի ասի իր ընկերներին. «Անուս Արմանուշ Չախմախչեան է. իմ ընտանիքի ծառի վրայ բոլորն էլ Այսինչ Այնիսչեան են եղել, եւ ես թոռնուհին եմ ցեղասպանութիւնից ազատուածների, որոնք իրենց բոլոր ազգականներին կորցրին թուրք մսագործների [մարդաս-պանների] ձեռքով 1915-ին. բայց ես, իմ ուղեղը լուացել եմ ցեղասպանութիւնը ուրանալու համար, որովհետեւ ինձ մեծացրել է ինչ որ թուրք՝ անունը Մուստաֆա... Ի՞նչ կատակ է սա ... Ախ, *մառնիմ խալասիմ*»:

Տարիներ յետոյ, հօր ընտանիքից լսած ու Ամերիկայում Հայկական Հարցի մասին տեղեկացուած Արմանուշը «մի քանի անգամ փորձել էր խորթ հօր հետ խօսել 1915-ի